№ 153 Սեպտեմբերի 3 (15) 1880 Սեպտեմբերի 3 (15) № 153

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարինը 6 ռուբլ
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

Ստաբաքաղաքացիք դիմում են ուղղակի
*Тифлисъ. Редакція „Мшакъ“.*

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւնն ընդունվում է ամէն ժամով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բէալական դպրոցներ:—Ներքին տեսութիւն: Նամակ Աթալյեանից: Նամակ Հին-Նախիջևանից: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: «Голосъ» լրագրի Թղթակցութիւնը: —«Մշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւններ:

## ԲԷԱԼԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Ռուսաց «Новое Время» լրագիրը այն միտքն է յայտնում, որ լաւ կը լինէր, եթէ մեր բէալական դպրոցները համալրվէին նոյն իրաւունքներ ունեցող ուսումնարանական հիմնարկութիւններ, ինչպէս կլասիկային գիմնազիաներ, այն զանազանութեամբ միայն, որ բէալական գիմնազիաների մէջ տիրապետէր բնական գիտութիւնների ուսումը, իսկ կլասիկային գիմնազիաներում կլասիկային ուսմունքների սիստեմը:

Այդպիսով, եթէ լրագրի միտքը ընդունվէր՝ թէ բէալական և թէ կլասիկային գիմնազիաներից դուրս եկած երիտասարդները հաւասարապէս մուտք կունենային բոլոր բարձրագոյն դպրոցների և համալսարանի մէջ, այն զանազանութեամբ որ բէալական գիմնազիաներում ուսումնարարտածները կընդունվէին տեխնիկական բարձրագոյն դպրոցներում, համալսարանի բնագիտական և մաթեմատիկական բաժիններում և բժշկական ֆակուլտէտներում, իսկ կլասիկային գիմնազիաներում ուսում ստացածների համար ազատ ասպարէզ կը բացվի մնալ համալսարանի իրաւաբանական, լեզուագիտական ֆակուլտետները և ուրիշ բարձրագոյն դպրոցներ:

Մինչև այժմ բէալական դպրոցներում ստացածների համար համալսարանի ոչ մի ֆակուլտէտը մատչելի չէր, իսկապէս բարձրագոյն, ընդհանուր կրթողական ուսման դռները փակված էին նրանց համար և մատչելի էին միմիայն «մանագիտական» դպրոցները:

Այդ լուրը արտատպելով «Новое Время» լրագրից, Մոսկվայի «Русскій Курьеръ» լրագիրը աւելացնում է որ մինչև այժմ Ռուսաստանի երիտասարդութեան կէսը, նրանք, որոնք սովորում էին բէալական դպրոցներում, հասարակութեան և պետութեան մէջ մի տեսակ խորթ որդիներ էին, կլասիկների հետ հաւասար իրաւունքներ չէին վայելում օրէնքների առջև, զրկված լինելով բարձրագոյն, համալսարանական ուսում ստանալու իրաւունքից:

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԱԹԱՅԵԱՆԻՑ

Օդոստոսի 25

Քանի օրից ի վեր Աթալյեանում յորդ անձրևները անսպասելի են, հնձված, բայց չը կալված ցորենին շատ մեծ վնաս պատճառեցին:

Եթէ անձրևները երկար տևեցին, ինչպէս նշանները երևում է, գիւղացիք մեծագնակ վնասների կենթարկվին:

Տիկին և պարոն Անենց նշանակվել են առաջիկայ սեպտեմբերից Եղիսաբէթեան ուսումնարանում բացվելիք աղջիկանոցի ուսուցչներ: Եթէ չենք սխալվում մեր իգական ուսումնարաններում կանոնաւոր աղջիկանոց բանալը առաջին անգամ աչա Աթալյեանում է լինում: Մտադրութիւն կայ եկող տարի գործնական տնտեսագիտութիւն էլ մտցնել:

Գաղիականութիւնից ի վեր մինչև այսօր աղքատների համար շաբաթ շաբաթ ժողոված կամաւոր նուէրների հանգանակութիւնը հոգեոր իշխանութիւնը դադարեցնել տուեց, ինչպէս կարծում ենք, չը կարողանալով պաշտպանել այդ դասը գաւառապետի դէմ: Ցանկալի էր իմանալ թէ հոգեոր իշխանութիւնը ինչ է անելու այն մոտ 1500 ռուբլի պարտատի դումարը, որը հոգաբարձուների մոտ մնաց: Եթէ անկելանոց բացանելու ցանկութիւն չը կայ, լաւ չէր լինի պարտատի դումարը ուղարկվէր յօդուտ սովելոց:

Հայ-կաթոլիկայ հոգեոր կառավարութեան Նախանդամ հայր Հաշէնեանն և Ծուխի մէջ ցատալի երկպառակութիւն ընծեղելով, ն. Հաշէնեանցը պաշտօնից հրաժարվեցաւ: Փափագելի էր իմանալ, թէ որքան եղաւ սովելոցների օգնի համար եկեղեցիներում դրված գանձանակների փողը: Ինչի այդ փողը չէ ուղարկվում ուր հարկն է:

Ամիհնայ գիւղի մոտ (Աթալյեանի գաւառում) ուր անցեալները թուրքերը մի նոր երդիքաւորդի սպանել էին, այս շաբաթ դարձեալ մի եղնեանց գործութիւն պատահեցաւ: Այս անգամ սպանողը հայ, սպանվողը թուրք է:

Պատռ անունով մի թուրք աւազակապետ վերջին ժամանակներումս սկսել է յանախակի ասպատակութիւններ անել:

Ս. Կարապետից վերադարձողները հաստատում են այս լուրը, թէ Տաճկաստանում արդարև հայկական ասպատակիչ կամ վրժիմնիր գնդեր են երևացել, թէ այդ գնդերը բաւական ուժեղ կանոնաւոր և ապահով են և թէ գնդերի գործի մէջ խառն է և մի քանի քուրդ չէխերի ու աւազակապետների մասը: Եթէ ճիշտ է ինչ որ ասում են, բաւականին նշանաւոր քրդեր որպէս յայտնված են այնտեղի հայերը:

Աթալյեանի եկեղեցական գիւղերը կապալով չը տալու համար Եչմիածնից գիւղերի կառավարութիւնը այս տարի Թորչն քահանայ Բարսեղեանցին յանձնեց իբրև առանձին կառավարչի: Այդ քահանան այժմ գիւղերի բերքը կապալու է տուել 500 սոմառ ցորենի ու գարու, մինչդեռ բերքերը ոչ մի տարի 1000 սօմառից պակաս չէն եղել: Կապալառուի վնաս, ասում են, ընկեր է և յիշեալ քահանայի եղբարը:

Քաղաքիս ազգային ուսումնարանների ուսուցիչների թիւը այս տարի աւելացաւ մանկավարժութիւնը մասնաւորապէս Մոսկվայում սովորած օրիորդով: Դա տեղացի մեծ. օրիորդ Թագուհի Սամիկոնեանն է:

Անցեալ շաբաթ մի յորդ անձրևի ժամանակ Ախալցխայից մինչև Արասիսման շինած նոր խճուղու բոլոր կամուրջները գրեթէ քանդվեցան: Սրթեկեկութիւնը այժմ չէն ճանապարհով է լինում: 275 հազար մանէթով էր շինված այդ խճուղին: Կեցցէ ինժիներ Տուլովթին, լաւ ճանապարհ շինեց:

Տաքեցի

### ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻՑ

15 օդոստոսի

«Մեղուի» 57 համարում, Հին-Նախիջևանից գրված մի նամակում, այնպիսի խոշոր սուտ էին մուտ գործել, զորս կարդալիս, կարի զարմացայ, տեսնելով, որ մարդկային կրքերը այն աստիճան կուրացնում են, որ ամէն մի ճշմարտութիւն առաջուր անելուց չէն վախենում: Մի տեսակ մարդիկ մեծ քաջութիւն են համարում այս կամ այն հասարակութեան մէջ երկպառակութեան սերմեր ձգելը և զանազան մութնոց հակառակ կուսակցութիւններ յարուցանելը: Այդ կարգի մարդկանցից տարաբաղդաբար մեր քաղաքում ևս այս տարի հանդէս դուրս եկան: Դրանց դասիցն է մեր քէլեխակեր տիրացու Կարօն, որը չը բաւականանալով անցեալ տարվա Ազուլիսում յարուցած զրվելի փոքրորիներովը, փորձ փորձեց և այստեղ իր հնարքը ցոյց տալու,—և ուսումնարանները հիմն ի վեր տապալելու: Փառք և պատիւ պարոնին. նա իր նպատակին հասաւ ու այնպէս քաղաքից հեռացաւ:

Լուսանկարչութիւնից յանկարծ տեսչական պաշտօնին հրաւիրված, և մանկավարժութեան հանն ու հասն անգամ չառած, Պերճ Պետրեանցի ամենարելի և ամենարեղ ուսուցիչ տիրացու Կարօն այժմ հիմնադրված ուղղին և սուտ և սխալ տեղեկութիւններ է հաղորդում «Մեղուին»: Նա զարմանք է յայտնում պ. հոգաբարձուի և ուսուցչի կարգադրութեամբ կազմված հարցաքննութեան և զրպարտական տարեդարձի հանդիսի մասին: Ինչ զարմանալու մի բան կայ. մինչև պարոնին, որպէս վարժապետ, պարապած չը լինելու և որ և է մի արդիւնք ցոյց տուած չը լինելու համար, հոգաբարձուն կամ ուսուցիչը պարտաւոր էին առանց հարցաքննութեան աշակերտուհիներին բաց թողնելու: Պարոնը իրան արդարացնելու համար ցոյց է տալիս, իբրև թէ ոչինչ արդիւնք չէ եղել և միւս առարկաներում: Պարոնը գտնել թող չիշէ, որ ընտիրները օտար մարդիկ են եղել և հաշտարար դատաւոր Ցարութիւն բէկ Սարուխան-Թէկանցը թնդանոթներ էր նշանակում. Աշակերտը և աշակերտուհի մեծամասնը հայոց լեզուի և ազգ. պատմութեան մէջ զոհացուցիչ և ամենալաւ թւեր ստացան: Պարոնը զարմանում է զարձեալ որ նախակրթարանում ազգային պատմութեան դաս է տրվում, առանց մոռանալ կարողանալու, որ պատմութիւնն էլ կարելի է յարմարեցնել երեխաների հասկացողութեանը: Մանաւանդ մեր քաղաքում հարկաւոր է, որ աշակերտները տարրն դասաւանդերից փոքր ի շատ ծանոթանան իրանց ազգային պատմութեան հետ, որովհետև տեղացիները շուտով հանում են իրանց որդիքը ծիական ուսումնարաններից և ուղարկում քաղաքային ուսումնարան, ուր ազգ. պատմութիւն այլ ևս չէն լսի: Իսկ ինչ որ վերաբերում է օրիորդներին, յայտնի է որ այստեղ երբ օրիորդը 12 կամ 13 տարեկան դարձաւ, նորան այլ ևս ուսումնարան չէն ուղարկում.

Ուրեմն նրբ պէտք է սոխորէին մեր երեխայքը իրանց ինչ ազգայնութեան պատկանելը. ումից ծագած և յառաջ եկած լինելը:

Պարոնը մի ամենասխրոյ սուտ ևս զլրած է, որպէս թէ ազգ. պատմութիւնը աւանդված է և-զել Զագեհանի կամ Տաճկաստանի բարբառով մի այլ գրված պատմութիւնից: Այն ինչ պարում ոչ մի դասագիրք չէ տրված աշակերտաց ձեռքը, բերանացի կերպով ամենայն մի դաս առանձին առանձին պատմած է և աշակերտները իրանք գրած են: Պարոնը իրան թոյլ է տուած զրպարտելու օրիորդ Մելքը-Շահնազարեանցին, որը միայն իր ծնողաց նախապաշարմունքից զերծ լինելով, կարողացել է շարունակել և յաջախել ուսումնարան, և առանձին ծիականի երրորդ տարուայ ընթացքն աւարտել: Իսկ ինչ որ վերաբերում է հառաչաւոր օրիորդին, նա ձեզանից հազարապատիկ լաւ կարդալ ու գրել գիտէ:

Պարոնը արտատպում է և մի հոգաբարձուի պատիւը: Ինչպէս «Մեղուն», նոյնպէս «Մշակին» անցեալ մի քանի համարներում տիրացու Կարօի շարադրութեամբ և Օտարականի ստորագրութեամբ զուրս եկան մի քանի յօդուածներ և անտեղի լուրեր, որոնց ամենն նպատակն էր արատաւորել մի այնպիսի անձի, որը անաչառ և խիստ է եղել իր պաշտօնեաներում ուսումնարանական հարցերի վերաբերութեամբ, և որը միայն եղել է Նախիջևանի հոգաբարձուների մէջ գործող անձը: Աւելորդ եմ համարում յիշել այն հակառակութիւնները, որոնք անկեղծորեն երևում են տիրացու Կարօի յօդուածներում. Նա մի տեղ ասում է. պ. հոգաբարձուն որ է պ. Գրիգոր Տ. Բաղդասարեանց, չէ կամենում հաշիւ տալ, իսկ մի այլ տեղ յայտնում է, թէ թատրական ներկայացումներից այսքան զուտ արդիւնք դոյացաւ, և այս ինչ չափ էլ ծախս եղաւ: Եթէ հոգաբարձուն հաշիւ չէր կամենում տալ և կամ չէր տուած, ուստի իմացաւ այսքան ծախս կամ արդիւնք լինելը... Վերջ եմ տալիս իմ ներկայ յօդուածին լաւ համոզված լինելով, որ հաւանաբար այսքան էլ բաւ էր:

Գէորգ Ս. Տ. Աղամանց

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վլադիմիրեանցի Երեցփոխան Գէորգ Տէրտէրանցից Արշակ քահանայ Տէր-Սանփանեանի ձեռքով ստացանք մէկ ռուբլ յօդուտ Հայաստանի սովելոցների:

«Մշակի» երկիսով համարը չը կարողացանք հրատարակել, որովհետև նոր տպարան էինք անցնում. Այժմ «Մշակը» կը տպվի Դաւթեան եղբայրների տպարանում:

Մեզ գրում են Նիժ. գիւղից որ ներկայ թւի մարտ ամսին հաւաքվեցաւ 31 ռուբլ յօդուտ Վանի սովելոցների, բայց մինչև այժմ ոչ մի տեղ ուղարկված չէ այդ փողը: Թղթակիցը հարցնում է ինչ եղան այդ հաւաքված փողերը:

ԱԼԱՓԱՆԷԼՆԻՑ մեզ գրում են, որ այդտեղի մի թուրք նոտերումս բռնաբարել է մի հայ աղջկան: Աղջկայ մայրը գնացել է գանգատվելու մարմնաւոր իշխանութիւնը: Թուրքը սպառնում է որ մորը կը սպանէ:

«Голосъ» լրագրին Կիշինեվից հեռագրում են գեղեցկալը, օգոստոսի 22-ից: «Վանքական կալուածների վարչութիւնը, ստանալով թղթատարութիւն գետեղել 50,000 ռուբլ քաղաքային բանկ, յանձնեց կատարել այդ գործը իր քարտուղար Մայերին: Բայց սա ստանալով այդ փողերը, չը մտցրեց բանկի մէջ և անհետացաւ օգոստոսի 14-ին: Նրա անհետանալը յայտնի եղաւ միայն 18-ին օգոստոսի:»

«Молва» լրագիրը հաղորդում է մի անհաւատալի լուր, իբր թէ Զինաստանի նախկին դեսպան Ս. Պետերբուրգում, Զուն-Խաուն, որ ներված է եղել իր կառավարութիւնից, երկու ամսից յետոյ կը վերադառնայ Ս. Պետերբուրգ, որպէս զի կրկին ընդունի ռուսաց մայրաքաղաքում իր պաշտօնը:

Ինչպէս հաղորդում է «Врачебная Вѣдомости»

լրագիրը, սպասում են մեծ վերանորոգութիւններ ներքին գործերի մինիստրութեան բժշկական քաղաքական բաժնի մէջ:

—

Ռուսաց «Вѣстн» լրագիրը հաղորդում է, որ Ս. Պետերբուրգի կանանց բժշկական կուրսերում իւրաքանչիւր տարի ընդունվում էին միջին թիվով 99 ուսանողուհիներ: Բայց 1876 թվին ուսանողուհիների թիւը հասաւ 130 հոգու: Արդէն 1879 տարուց սկսած նրանց թիւը պակասից և ընկաւ մինչև 77 հոգի:

—

«Донской Голосъ» լրագիրը հաղորդում է, որ Նորբուում անցայտ հարաստագործներ կոտրելով Բոսսով (Գեների վրա) քաղաքում գտնված Ս. Նիկոլայոս եկեղեցու պատուհանը, մտան եկեղեցի և գողացան եկեղեցու զարդեր 45,000 ռուբլի արժողութեամբ: Գողերը դեռ ևս գտնված չեն:

—

Օլիուլ քաղաքի մօտ, Կլէյնան նահանգում, ինչպէս հաղորդում է «Голосъ» լրագիրը, գտնվեցաւ արծաթի հարուստ հանք: Արծաթի հետ խառն է և ցինկ: Վարչությունից սպասվում է մասնագէտներից բաղկացած մի յանձնաժողով, որ պէտք է հետազօտէ այդ հանքը:

—

«Новое Время» առաջարկում է, որ բէյական դպրոցներից դարձնեն միջնակարգ դպրոցներ, որոնք նոյն իրաւունքներ ունենային, ինչպէս կլասիկային գիմնազիաներ: Բէյական գիմնազիաներում եղը տիրապետեն բնական գիտութիւններ, իսկ կլասսիկային գիմնազիաներում փիլիսոփայութիւնը:

—

Ճանապարհորդները մեզ պատմում են որ Բասսով—Վլադիկավկասեան երկաթուղու վրա անդադար գողութիւններ են պատահում: Ճանապարհորդները գալիս են մի քաղաք, բայց են անում իրանց արկղը և նկատում են որ արկղը արդէն բաց արած է եղել, միջից առարկաները պակասում են, դրանց տեղը քարեր են դրված և արկղը կրկին փակված է բանալիով: Պարզ է, որ այդ գողութիւնները կատարվում են նոյն իսկ երկաթուղու ծառայողների ձեռքով, որոնց յանձնվում են ճանապարհորդների արկղերը:

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Գրիգոր Վարձեանի «Թուաբանութիւն» գիրքը: Տպված է Թիֆլիսում, Մարտիրոսեանի տպարանում.

—

ՄՕՍԿՎԱՑԻՑ մեզ հեռագրում են որ տիկին Սոֆիա Մոսրեանցին թոյլ է տրված հրատարակել Մոսկվայում քաղաքական գրականական պատկերազարդ հայոց ամսագիր «Փարոս Հայաստանի» վերնագրով: Տարեկան գինը 5 ռուբլ է:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Голосъ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Կ. Պոլսից «Голосъ» լրագրին գրում են հետևեալը:

Եթէ հաւանութիւն այստեղ մամուլին, ամբողջ Հայաստանը ապստամբված է: Զէյթունի լեռնաբնակ հայերի 12 գունդերը, իրանց իշխան Բարիկի առաջնորդութեամբ իջել են սարերից և գնում են դէպի Մաբաշ: Ալեքսանդրական հայ ապստամբների հետ միացել են ալաբական շատ ցեղեր և Ալեպի վիլայեթի թիւրքմէնները, որոնց առաջնորդում է Թիւրքիայի մէջ յայտնի Խոզան-Օղլի-Ահմէդի որդին, «Semaphore» և «Stamboul» լրագիրների մէջ ասվել էլ անհանգստացնող լուրեր երևեցան. մինչև 500 հատող զինուորված հայեր կազմակերպվել են Նոր-Բայազէտի հարաւային կողմում և մտել են Թիւրքիա ռուսաց և պարսից սահմաններից: Այդ խումբի նպատակն է Փոքր-Ասիայի միւս մասում ապստամբութիւն բարձրացնել: Մուշի սանջակից 1000 մարդ միացել են դրանց հետ և սկսել են ոչնչացնել քիւրդերի գիւղերը: Զը նայելով այս հանգամանքին, իրանց ցեղապետներից անբաւական քիւրդ ցեղերը մտադիր են հայերի կողմն անցնել: Սուացված մամուլը տեղեկութիւններ հաղորդում, վանի վիլայեթի մէջ քիւրդերի եօթ գիւղեր ոչնչացված են:

Այդ հանգամանքը ի նկատի ունենալով, Թիւրքաց կառավարութիւնը փոխեց իր կարգադրութիւնը հայ Վահան-փաշային Հայաստանի նահանգապետ նշանակելը. մասին Այսուհետև արտաքոյ կարգի հրամաններ են ուղարկված Վանի նահանգապետ Սամիհ փաշային զօրքեր կենտրոնացնելու և ապստամբութիւնը ճնշելու համար: Վանի նահանգի հայերը գրեթէ բոլորն էլ զինուորված են:

Զիլամբերիկի նեստորականները ոգևորից բոլոր սպառնում են յարձակվել Սամիհ-փաշայի զօրքերի վրա: Այդ կիսանկախ լեռնականները վաղուց սպառնում են Թիւրքերին և կուռ համար մի առիթ են փընտռում: Նրանց առաջնորդում է իրանց ժառանգական գլխաւորը, որ Մարշիմոն է առնանվում:

Սուլթանը հրաւիրեց իր պալատը ներսէս պատրիարքին, որպէս զի խօսի նրա հետ այն միջոցների մասին, որոնց անհրաժեշտ է գործադրել Հայաստանը հանգստացնելու համար: Միևնոյն ժամանակ սուլթանը ակնարկեց պատրիարքին, որ ապստամբութեան բուքն Կ. Պոլսի մէջ է ընդարձակ և նշանը այնտեղից է տուած: Պատրիարքը յայտնեց իր վրդովմունքը Հայաստանի մէջ պատահածի մասին և ասաց, որ նա շատ անգամ յայտնել է սուլթանի մինիստրներին, որ ժողովրդական համբերութիւնը սահման ունի և որ երբ այդ համբերութիւնը հատնում է, դժուար է ուղղել գործը: Բայց թիւրքաց մինիստրները անամենաբար ուշադրութիւն չէին դարձնում այդ յայտնութիւնների վրա:

Սուլթանը, հասկանալով Հայաստանի մէջ ծագած ապստամբութեան վտանգաւոր լինելը, խոստացաւ Ներսէս պատրիարքին Հայաստանին ինքնավարութիւն տալ և պահանջում էր, որ ներսէս պատրիարքը վճռողական միջոցներ գործադրէ անկարգութիւնները վերջացնելու համար: Պատրիարքը խոստացաւ սուլթանին գործ դնել իր ազդեցութիւնը, բայց հեռացաւ սուլթանից աջողութիւն չը խոստանալով:

Ուրեմն Օսմանեան պետութիւնը կարող է հինգայատակ լինելը: Այսուհետ բոլորը այն կարծիքի են, որ Թիւրքիան կարող է ոչնչանալ, եթէ Փոքր-Ասիայի քրիստոնեաներին ամենարնդարձակ ինքնավարութիւն չը տրվի:

Մի քանի օր է, որ սուլթանը շատ ոգևորված չէ Արեւդդին-փաշայի վերաբերութեամբ: Դրա պատճառը Արեւդդին-փաշայի կասկածանքի տակ դցող վարմունքն է պատրաստի հետ: Մինիստրութեան մէջ նոր փոփոխութիւններ են գուշակում և ասում են, որ Մահմուդ-Նեդիմ-փաշա, Ռուսաստանի կողմնակիցը և Ներսէս պատրիարքի բարեկամը, մինիստրութեան նախագահ կը նշանակվի: Իսկապէս Անգլիայի ազդեցութիւնը Թիւրքիայի վրա դեռ ևս բաւական մեծ է և հաւանի թէ նա թոյլ տայ այդպիսի փոփոխութիւն:

Հայաստանի մէջ պատահած անցքերի պատճառով, շատերի կարծիքով, Թիւրքիան նշանաւոր դիրքներ կանէ յունական և չերնոգորական հարցերի մէջ: Այդ բանը անհրաժեշտ է, որովհետև Փոքր-Ասիայի մէջ հաւաքվող զօրքերը հարկաւոր են նոյն երկրի համար, որպեզ մահմեդականների հաւատարմութեան վրա էլ չէ կարելի վստահանալ:

Կ. Պոլսի ազգաբնակութեան վրա չափազանց զօրեղ ապատրութիւն գործեց Ռուսաստանի սահմաններից եկած լուրը Հայերի կուսակիցների երևալը այդ կողմից համոզեց տեղացիներին, որ Թիւրքիան պէտք է ի նկատի առնի Ռուսաստանի պահանջները, երկիւղ կրելով ոչ թէ միայն իր դիմացը եղած Բալկանների կողմից, այլ և եռեւից, որտեղից կարող են յարձակվել հայ կամաւորները, որոնք ռուսաց կառավարութիւնից նոյնպէս չեն զրկված, ինչպէս զրկված չէին բուլգարացի ապստամբները: Ամենքը հաւատացած են, որ Թիւրքիան իր այս նոր դրութեան պատճառով տալի կը յարգի Ռուսաստանի խորհուրդները, քան թէ մի այլ պետութեան: Այսպէս թէ այնպէս Փոքր-Ասիայի գործերի խառնվելը մեծ հարուած կը տայ Թիւրքիայի յամառութեանը, որ անդադար հիմվում էր մահմեդականների ֆանատիկոսութեան վրա: Փոքր-Ասիայի մահմեդական տարրի անցուցակի լինելը կապացուցանի, որ Բ. Դրան առաջ բերած պատճառը անհիմն է:

Օրերում կատարվեցաւ Կ. Պոլսի հայկական երեք ընկերութիւնների վաղուց նախագրված միութիւնը: Այդ ընկերութիւնները զանազան ժամանակներ են հիմնված և գործի աջողութեան համար Հայաստանի ամբողջ տարածութիւնը խառնեթամբ բաժանված էր երեք ուսումնական շրջանների, որոնցից իւրաքանչիւրը ընկերութիւններից մէկի վարչութեան տակ էր: Որովհետև այդ ընկերութիւնների զանձարանները լցվում էին նոյնպէս և ռուսահայերից նուիրատուութիւններով, Ռուսաստանի հայ պարբերական հրատարակութիւնների առաջաւոր ներկայացուցիչ «Մշակի» խմբագիրը անցեալ տարի առաջարկեց միացնել այդ երեք ընկերութիւնները, հիմնվելով շատ օրինաւոր պատճառների վրա, որոնք անհրաժեշտ էին առնում այդ միութիւնը: Առաջ այդ միաքը բաւական անտարբերութեամբ ընդունվեց, բայց երբ Թիֆլիսի լուսաբերի խմբագրութիւնը կարձակաւ յայտնեց, որ հակառակ դէպքում կը դադարեցնի տալ տարեկան այն 5000 ռուբլը, որ «Մշակի» խմբագրութեան միջոցով մտնում էր ընկերութիւնների գանձարանը, այն ժամանակ երկար բանակցութիւններից յետոյ միութիւնը կայացաւ և ընկերութիւնը «Հայկական միացեալ ընկերութիւն» անուանվեցաւ:

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳՐԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳ ԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Կ. ՊՈԼԻՍ, 29 օգոստոսի: Ասում են որ պետութիւնների դեսպանները կը յանձնեն Բ. Դրանը մի հաւաքական թուղթ, որ կը վերաբերվի Հայաստանի վերանորոգութիւններին մասին: Լսվում է որ Բ. Դրան առաջարկութիւնների մեծ մասը չեն ընդունվիլ:

ԲԱԳԻՐԶԱ, 29 օգոստոսի: Ծովային ցոյցի համար ուղարկված նաւատորմին միացան երկու ռուսաց նաւեր, որ այս դիշերը այստեղ հասան: Բրաս-փաշա դիտաւորութիւն ունի գնալ Դուլցինիոյ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 օգոստոսի: Լսվում է, որ օգոստոսի 30-ին կոմս Լօրիս-Մելիքովին շնորհվեց Ա. Անդրէյ Պերվոզվանոյ շքանշանը:

ՎՈԼԳԱ, 30 օգոստոսի: Կամաչիզ երթևեկութեան համար հանդիսաւոր կերպով բացված է:

ՕԴԵՍՍԱ, 30 օգոստոսի: Կրէյսէր «Մոսկվա» ուղևորվեցաւ Թաղաղ ովկիանոսը 35000 պուդ բեռնով և երկու ակնակիր նաւակներով:

Կ. ՊՈԼԻՍ, 30 օգոստոսի: Կարդիֆ-փաշա հրաժարական տուեց: Սուլթանը ընդունեց հրաժարականը, սպասում են նոր մինիստրութեան կազմակերպելուն:

ԲԵՐԼԻՆ, 30 օգոստոսի: Այսօր հասաւ այստեղ աւստրիական թագաժառանգը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 օգոստոսի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է. Թագաւոր Կայսրը հրամայեց մինիստրների մասնաժողովին միջոցներ գտնել Սիբիրսկայա երկաթուղու մի ճիւղ անցաղալ կառուցանելու համար Եկատերինբուրգի և Տիումենի մէջ:

ԼՈՆԴՈՆ, օգոստոսի: Ծովային ցոյցը մի քանի օրով յետաձգված է: Զէրնոգորիայի իշխանը հրաժարվում է ստանալ Դիսոշ և Գրուդի այն պայմանով, որ Բ. Դուռը խոստանա զանգ և պատուանակ յանձնել Գուլցինիոյ Զերնոգորիային:

Կ. ՊՈԼԻՍ, 31 օգոստոսի: Սուլթանը Սաֆվեթ-փաշային Կարդիֆ-փաշայի փոխանորդ նշանակեց: Մինիստրներ նշանակվեցան. Օսմանփաշան արտաքին գործերի, Ռիֆի-փաշան առաջարանի, Կեամիլ-փաշան լուսաւորութեան, Ալիվեր-փաշան պետական խորհուրդի նախագահ, միւս մինիստրները մնացին իրանց պաշտօնների մէջ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վ.Լ.ԱԴԻԿԱՎԿԱՍԵԱՆ ՕՂԻՒ գործարանի պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՇԱՌԻՐ յայտնում է, որ 1880 թ. յուլիսի 15-ին սկսելով մինչև ամենայաւելագոյն ՕՂԻՆԵՐ հետեւեալ անուններով. ՍԵՎԱՆ, ԲՐԻՆՁԻ և ԲՈՒԼՈՒՐԻՆԳ: Շիշը ամենով արժէ 45 կ., առանց ամանի 38 կ., կէս շիշը 25 կ., առանց ամանի 20 կ., և, ամեն այլ տեսակ օղիներ առանձին ցուցակ ունեին: Մեծ քանութիւնամբ առնողներին նշանաւոր զիջումն է անվում: Օղիները պատրաստված են ամենայաւ հայի ՍՊԻՏԻՑ ոգիի մաքրելու օգնութեամբ և իրան յատկութեամբ ՄԱՔՐԱՔԱՂԱՔԻ ամենայաւ գործարանների մէջ պատրաստվածներից վատ չեն: Գ. ոգ. գնորդների ուշադրութիւնը դարձնում ենք առաջարկած նիւթի վրա, որի արժանաւորութեան համար գործարանը պատասխանատու է: Օղիների պահեստը գտնվում է Մաքրաքեան կամուրջի վրա, Ցենտրալնայա հիւրանոցի տակ, Լիֆտանինսկու տանը, Վ.օրենցովի արձանի դիմացը: 3—8 (2 շաբ.)

—

Ցուլիսի 1-ից Վ.ԱՐՇԱՎԻՍԿԱՅԻ ՊԵԿԱՐՆԵԼՑԻՆ կից կը բացվին ՍԵՆԵԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի սառնալ ԿԱՖԷ, ՇՈԿՈԼԱԴ թէյ և պատրաստված հանքային զանազան ջուրը 38—40

—

Թէմական վերատեսուչ Գ. ԲԱՐԹՈՒՂԱԼՐԵԱՆ յայտնում է, որ նա այժմ բնակվում է Կուկի, Սիմէ օղոմլայա փողոց, տուն Սարգիս Ալէքսանեանի №-16:

3—4.

—

ԹԻՖԼԻՍԻ ՊՐՈԳԻՄՆԱԶԻԱ ՎԵՐԱՑԱՐԱՆ, Հայոց ծխական և մասնաւոր ուսումնարաններում 8 ՏԱՐԻ դասասոսութիւն տրած մի ԵՐԻՏԱՍԱՐԴ ներկայ սեպտեմբերի 1-ից ցանկանում է ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՇՏՕՆ ստանալ բացառապէս ԹՈՒՄԱՅԻ լեզուից և ԹՈՒՄԱՔԱՂԱՔԻ ԹԵՆԻՑ, ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և դաւառներում. Տրդեկանալ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ կամ Ենիթանցեանցի ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ:

21—22.

—

ՄԻ ՀԱՅ ԸՍԱՆԻՔՈՒՄ, ընդունում են ԳԻՇԵՐՈՆԵԱԿՆԵՐ արժան վճարով 8—15 տարեկաններին, ԳԱՎԱՌԱՑԻՆԵՐԻՑ: Հարցնել «Մշակի» խմբագրատանը:

1—4

—

Ներկայ տարուայ սեպտեմբերի 15-ին Թիֆլիսի Նահանգական դատարանում (Գրուժինցի Սուգում, լինելու է տարգ (աճուրդ) Հանդուցեալ Արկադեայ Գամանցովի Հոլրը Ծախելու համար, որոնք գտնվում են Բորչալի Սարայլու գիւղում, Շուլաների մօտ Մանրամասնութիւնը կարելի է կարդալ «Кавказъ» լրագրի № 186 Տէրութեան յայտարարութեան մասնում

—

Մի հայ գերդաստան, որը բնակվում է Մայկոպում, Տրաւիրում է հայ օրիորդ—լմացող Հայերէն, Ռուսերէն և Գաղղերէն լեզուներ, նոյնպէս և երաժշտութիւն, սնուկան ուսուցչուհի Հոյ տեղը ընդունել, 600 ռուբլ տարեկան ռոճիկով: Ճանապարհի ծախքը առնում է գերդաստանը իւր վրա: Ցանկացողները իրանց պայմաններով կարողեն գիմել նամակով Въ Майкопъ, Куб. обл. Николаю Іосифовичу Алихановъ.

3—10

Дозволено цензурою Тифлисъ, 2 сентября 1880 г. Տպարան եղբայրք Դաւթեանցներ Типографія братьевъ Давидовыхъ